«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր , կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Մանուկյան

Ուսումնական հաստատություն՝ Արագյուղի << Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ---------- 4-5

2. Բնություն ---------- 6-7

3. Ի՞նչ է բնապահպանությունը. Հասկացությունը և տերմինը- 8-9

4. Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա----- 10-13

- Անտառների հատում
- Արդյունաբերական բնօգտագործում
- Լեռնահանքային արդյունաբերություն
- Օդային ու ջրային ավազաններ
- Տրանսպորտ
- Ջրոսաշրջություն

5. Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում ---------- 14-16

6.Եզրակացություն---------- 17

7.Գրականության ցանկ ---------- 18

Հետազոտության թեմայի արդիականությունը

Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ Երկիր մոլորակի բնապահպանության և բնօգտագործման վերաբերյալ:

«Մարդկության ինքնաոչնչացման վտանգ», «բնապահպանական և բնօգտագործման հիմնախնդիր» հասկացությունները դարձել են համայն մարդկությանը հուզող հարցեր: Մարդը գոյատևում և ապահովում է իր հասարակական առաջընթացը՝ օգտվելով բնության բարիքներից: Մարդու վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ ի սկզբանե եղել է սպառողական, բայց այդ միջավայրի ինքնազարգացման և ինքնավերականգնման միջոցով «բուժվել են» մարդահարույց վնասները: Այժմ մարդու ակտիվ ներգործությունը բնական միջավայրի վրա այնպիսի ծավալներ է ընդունել, որ խախտվել է ինքնակարգավորման ու ինքնազարգացման ընթացքը (վերջին 30 տարվա ընթացքում բնությունից կորզվել և օգտագործվել է այնքան նյութական պաշար, որքան նախորդ 5000 տարվա ընթացքում):

Հետազոտության նպատակը

- Ցույց տալ ինչպիսի փոխհարաբերության մեջ է գտնվում մարդը բնության հետ:
- Բնապահպանական մտածողություն առաջացնել:
- Բնության հետ հաղորդակցվելու հմտություններ և կարողություններ զարգացնել:
- Մարդկանց իրազեկել բնապահպանական հիմնախնդիրներին
- Հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտումը տարատեսակ թափոններով:

Հետազոտության խնդիրը

1. Ապահովել մարդկանց ապրելու և կենսագործունեության համար պիտանի բնական միջավայր,
2. Պահպանել բնական գենոֆոնդը, նպաստել կենդանական ու բուսական աշխարհների հարստությունների վերարտադրմանը,
3. Պահպանել բնատարածքային համալիրների ընդհանուր էկոլոգիական հավասարակշռությունը և լանդշաֆտների բազմազանությունը,
4. Պահպանել և արդյունավետ օգտագործել օգտակար հանածոների պաշարները, ապահովել դրանց համակարգված և անթափոն շահագործումը,
5. Պահպանել հազվագյուտ բնական համալիրները և ազգային ժառանգություն հանդիսացող պատմամշակութային ու գեղագիտական բնական արժեքները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնությունն ամեն ինչի մասին հոգ է տարել,մեզ միայն մնում է սովորել Բնությունից :

Լեոնարդո դա Վինչի

Իր ընթացքի ակունքներում է մարդկության նոր քաղաքակրթության երրորդ հազարամյակում, նախորդ հազարամյակների հասարակական տագնապների թվում իր կայուն տեղն է զբաղեցրել բնապահպանականը: Թվում է, թե մարդկությունը, չկանխատեսելով սեփական ոչնչացումը, արագընթաց շարժվում է դեպի այդ «նպատակը»: Բանականությունից դուրս է, տրամաբանությունից զուրկ, է ինչու՛, գիտակցելով, որ կենսոլորտի ռեսուրսներն անվերջ չեն, և սահմանափակ է կենսապահովման բնական համակարգի տնտեսական տարողականությունը, հողագնդով մեկ թափոնների աճն ու հումքի տեղափոխումները լի են անկանխատեսելի հետևանքներով, որ պատերազմը սոցիալական բախումների հանգուցալուծման լավագույն միջոցը չէ, որ մարդուն, ի շահ հասարակության, ինքնադրսևորման հնարավորություններից զրկելը բումերանգի պես շրջվում է ի՛ր իսկ՝ հասարակության դեմ, հանգեցնում նրա դեգրադացմանը և այլն, այս ամենով հանդերձ մարդը լուրջ քայլեր չի ձեռնարկում իր փրկության ուղղությամբ: Ավելին,

օգտագործելով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները բնության հանդեպ անզուսպ ու անխելամիտ ներխուժմամբ աճապարում է դեպի սեփական կործանում՝ միամտորեն կարծելով, թե նման բան երբեք տեղի չի ունենա: Այսօր,երբ մարդը հասել է բնության հետ համագոյակցության վտանգավոր ճամփաբաժանի, ինչպես ամբողջ աշխարհում,այնպես էլ ամեն երկրում ընթացող քաղաքական , սոցիալ-տնտեսական գործընթացները նոր մոտեցումներ են թելադրում նաև բնապահպանության բնագավառում:

Մարդու և բնության փոխազդեցությունը հանգեցրել է համաշխարհային նշանակություն ունեցող էկոլոգիական մի շարք խնդիրների՝ էկոլոգիական ճգնաժամի, բնության և մշակույթի ոչնչացման: Բնության պահպանումը վերածվել է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մանկավարժական, հոգեբանական խնդրի: Այս իսկ պատճառով բնության հանդեպ վերաբերմունքի նոր ձևը՝ բնության հետ ներդաշնակությունը, դարձել է դաստիարակության և կրթության գլխավոր խնդիրներից մեկը: Բացի այդ, էկոլոգիական պայմանները, շրջապատող իրականության գործոնները մեծ ազդեցություն ունեն մարդու հոգեկան առողջության վրա: Էկոլոգիական աղտոտվածությունը, բնակլիմայական պայմանների փոփոխությունները հանգեցնում են սթրեսային գործոնների թվի ավելացմանը: Շրջապատող իրականությունը նաև բավականին մեծ նշանակություն ունի հոգեկանի ձևավորման և զարգացման գործում:Այս ամենն ամփոփվում է էկոլոգիական գիտակցության դաշտում, որը բնության մասին պատկերացումների, վերաբերմունքային և վարքային մոդելների համամասնություն է: Բնության հանդեպ վերաբերմունքն ու փոխազդեցությունը բարդ համակարգ է, որն ունի զարգացման տարիքային որոշակի դինամիկա: Շրջակա միջավայրն ու պայմանները մեծ դեր են խաղում անձի ձևավորման և հետագա զարգացման գործում: Յուրաքանչյուր տարիքային փուլին բնորոշ է էկոլոգիական գիտակցության զարգացման ուրույն առանձնահատկություններ:

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Շաքիի ջրվեժ, Հայաստան

Գալունգունգ հրաբխի ժայթքման ժամանակ բռնկված կայծակը

Բաշալ լիճը շվեյցարական Ալպերում

Կյանքը խորունկ օվկիանոսում

Բնություն (լատին.՝ natura, հուն.՝ physis (φύσις) մարդուն շրջապատող ֆիզիկական միջավայրն է և սովորաբար ընդգրկում է ֆիզիկական տիեզերքի բոլոր առարկաներն ու երևույթները, բացի նրանցից, որոնք ստեղծված են մարդկանց կողմից։

Բնությունը մշտապես շարժվում է և զարգանում, ընդգրկում անօրգանական և օրգանական աշխարհները։ Անօրգանական աշխարհին են պատկանում տիեզերական մարմինները, ջուրը, հողը, օդը, ապարները, օգտակար հանածոները։ Բուսական և կենդանական օրգանիզմների ողջ բազմազանությունը կազմում է օրգանական աշխարհը։ Զարգացման ընթացքում անօրգանական բնությունը օրինաչափորեն առաջ է բերում օրգանական բնություն (կենսոլորտ)՝ մարդու

կենսագործունեության համար բոլոր անհրաժեշտ պայմաններով: Հասարակական կյանքը, արտադրությունը, մարդը և նրա բանականությունը գոյատևում են բնական նյութերի հենքի վրա, գործում բնական օրինաչափություններին համապատասխան: Բնության ներդաշնակությունն ու հավասարակշռությունը պայմանավորված են բազմազան փոխադարձ կապերով, և 1 օղակի խախտումը կարող է կտրել երևույթների ամբողջ շղթան: Ուստի բնության հետ հարաբերություններում անհրաժեշտ է ճանաչել ու ճիշտ կիրառել նրա օրինաչափությունները, տիրապետել բնության հետ ներդաշնակ ապրելու արվեստին, չխախտել բնական շարժընթացների հավասարակշռությունը, այլապես փոխազդեցությունը կարող է վերածվել հակասության: Նեղ իմաստով՝ բնությունը մարդուն անմիջապես շրջապատող և նրա գոյությունն ապահովող բնական տարրերի ու պայմանների ամբողջությունն է:

Այս առումով այն համընկնում է բնական միջավայր հասկացության հետ, որն ներառում է միջավայրի անկենդան և կենդանի բնության օբյեկտները:

Բնություն են անվանում կենդանի բույսերի և կենդանիների ամբողջությունը, ինչպես նաև, որոշ դեպքերում, ոչ կենդանի երևույթներն ու գործընթացները, ինչպես, օրինակ, եղանակը կամ երկրաբանությունը: Հաճախ գործածվում են նաև բնական միջավայր կամ վայրի կյանք հասկացությունները՝ վայրի կենդանիները, ժայռերը, անտառը և ընդհանրապես այն ամենը, ինչը չի ենթարկվում մարդու ուղղակի ազդեցությանը, կամ ինչը պահպանվում է անկախ մարդու ազդեցությունից: Օրինակ, արդյունաբերական ապրանքը կամ մարդու միջամտությամբ ստեղծվածը սովորաբար բնության մաս չեն համարվում: Այս առավել ավանդական մոտեցումը բնական իրերին, որին դեռ կարելի է հանդիպել այսօր, տարանջատում է բնականն ու արհեստականը և արհեստական ասելով հասկանում են այն, ինչը ստեղծվում է մարդկային բանականության կամ մտքի շնորհիվ: Բովանդակությունից կախված *բնական* տերմինի հականիշն է *անբնականը* կամ *գերբնականը*:

Հասկանալով բնության կարևորությունը մարդու կյանքում, դեռ փոքրուց երեխաների մոտ պետք է ձևավորենք սեր դեպի բնությունը, շրջակա միջավայրը: Երեխան փոքր տարիքից պիտի գիտակցի, թե ինչքան կարևոր է պահպանել բնությունը:

Իսկ ի՞նչ է բնապահպանությունը:

Ինչ է բնապահպանությունը. Հասկացությունը և տերմինը

Եթե մենք ցանկանում ենք փոխել աշխարհը, ապա նախ և առաջ պետք է փոխենք Մարդուն, նրա որակների և արժեքների համակարգը:

Ա. Պեչչեի

Մարդու և բնության փոխկապակցվածության համակողմանի իմաստավորման օրըստօրե կարևորվող հանգամանքը, որպես տնտեսական, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, նաև՝ բարոյավարքային ու էթիկական և բազում այլ հիմնահարցերի համալիր, իր վրա է սևեռել մարդկային միտքը, բնական և հասարակական արդի գիտությունների ուշադրությունը, որոնց հատույթում էլ բնապահպանական սահմանների ընդլայնմամբ ձևավորվում է ժամանակակակից էկոլոգիան: Միլիոնավոր տարիների պատմություն ունի մարդ-բնություն փոխհարաբերությունը, որը սկիզբ է առել բանական արարածի գոյավորման պահից, շարունակվում է մինչև մեր օրերը: Ու դեռ պիտի հարատևի, քանի որ հողագնդի վրա գոյատևում են մարդն ու մշտահոլով բնությունը… Արդի քաղաքակրթության առջև ծառացած հիմնահարցերի շարքում ավելի ու ավելի է մեծանում բնական միջավայրի նկատմամբ «մարդկային» վերաբերմունքի տեսակարար կշիռը: Այսօր բանական միտքը հուզում է բնության վրա մարդու աննախադեպ բազմատեսակ , հաճախ՝ ոչ խելամիտ ներգործության հետևանքով գոյավորվող վտանգը: Գնալով ավելի ու ավելի բարձր է հնչում ընդհանրապես համամարդկային և հատկապե՛ս բնության հետ համակեցության համակարգային փոփոխությունների անհրաժեշտության մասին աղաղակը: Ուժեղանում է մարդու՝ համաշխարհային էկոլոգիական քաոսը ներխուժելու փոխարեն ներդաշնակության փնտրտուքը: Այս ծեր մոլորակի վրա այլևս չկա որևէ անկյուն , որտեղ չդիտվեն մարդու տնտեսական (իսկ հաճախ ՝ անտնտեսվար) գործունեության հետքերը: Զուտ գոյապահպանման միջավայր դիտելուց բացի՝ մարդը ժամանակի ընթացքում հոգատարություն է ցուցաբերել բնության՝ բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ՝ աստիճանաբար ձևավորելով փոխազդեցության որոշակի կուլտուրա: Ժամանակի ընթացքում այդ կուլտուրան դարձել է յուրաքանչյուր ժողովրդի ազգային ընդհանուր մշակույթի կարևորագույն ստորոգելին, քանի որ որոշակի էթնիկական միջավայր թափանցելով ու ներառելով տվյալ ազգի իդեալները, ավանդույթները, սովորույթներն ու ազգային մտածողությունը, էկոլոգիական կուլտուրան սկսում է դրսևորվել ազգային ձևերի

միջոցով, որոշակիորեն «ազգայնանում» և ազգային իմաստ է ստանում : Բնության պահպանությունը պետական ու հասարակական միջոցառումների համալիր է , որի նպատակն է պահպանել բնական հարստությունները, նպաստել դրանց վերարտադրմանը և ապահովել արդյունավետ օգտագործումը: Կանխել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունները, ապահովել մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությունը:

Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել Արաքսի հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողունաշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մողեսը:

Վերջին 50 տարիների ընթացքում կիսաանապատային և տափաստանային տարածքների ակտիվ յուրացման հետևանքով իրենց բնադրավայրերից դուրս են մղվել զանազան թռչուններ, մեծ, փոքր և գեղանի արոսները, սևափոր դոլոնը, կանաչ մեղվակերը: Տեղի է ունեցել ջրաճահճային էկոհամակարգերի ոչնչացում: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով մերկացել են առափնյա ժայռերն ու մերձափնյա հատվածը, չորացել շրջակա ճահճուտները, վերացել են Սևանի իշխանի ձվադրավայրերի հիմնական մասը, բազմաթիվ ջրլող ու չվող թռչունների, կաթնասունների տեսակները: Սևանա և Արփի (անցյալում նաև Գիլլի) լճերն անփոխարինելի դեր ունեն ոչ միայն հանրապետության ճահճային թռչունների պահպանության, այլև հարևան երկրների ջրային ավազանների հետ օրգանական կապի պահպանման առումով, որով ապահովվում է հանրապետության տարածքում 145 տեսակ ջրլող և առափնյա թռչնատեսակների գոյությունը:

Անտառների հատում

Թեղուտի հատած անտառները

Անտառների անկանոն հատումների պատճառով շատ կաթնասուններ (օրինակ՝ կզաքիսը, հնդկական մացառախոզը, գորշ արջը, մուֆլոնը, անտառային կատուն և այլն) լքել են իրենց բնական կենսավայրերը։ Անտառհատում թույլատրվում է միայն անտառվերականգնման, սանիտարական և խնամքի նպատակներով։

Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային գետերի ու ջրամբարների տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրագրական ռեժիմը։ Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավասեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ։ Սկսվում է անտառային հողերի կենսահամակեցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝ բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գաճաճ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում սխեմայով։

Արդյունաբերական բնօգտագործում

Փայտամշակում

Բնական պաշարների օգտագործումն ու դրանից ստացվող համախառն արտադրանքն աճել են հարյուրապատիկ՝ հիմնականում էքստենսիվ զարգացման ու բնական պաշարների անխնա շահագործման հաշվին, իսկ էկոլոգիական խնդիրները

չեն կարևորվել: Հետևանքը եղել է այն, որ օտարվել են նոր հողատարածքներ, դեգրադացվել բնական լանդշաֆտներ, աղտոտվել են հողերը, օդային և ջրային ավազանները:

Արդյունաբերական ձեռնարկությունները մթնոլորտ են արտանետել շուրջ 50 տեսակի վնասակար նյութեր՝ պինդ մասնիկներ , գազային ու հեղուկ մասնիկներ:

Լեռնահանքային արդյունաբերություն

Զգալի բացասական ազդեցություն է գործում լեռնահանքային արդյունաբերությունը. Այս ճյուղի բացասական ազդեցությունը լանդշաֆտի և կենսաբազմազանության վրա դրսևորվում է հիմնականում.

- դատարկ ապարի ու թափոնների կուտակումով և շրջապատում տարածումով,
- բաց հանքերի շահագործման հետևանքով բնական լանդշաֆտների ու էկոհամակարգերի խախտումով, որը հանգեցնում է լանդշաֆտի դեգրադացման,
- ստորգետնյա ջրերի ջրաբանական ռեժիմի, ֆիզիկական և քիմիական բաղադրությունների փոփոխություններով:

Օդային ու ջրային ավազաններ

Գոշ լիճ, Դիլիջան

Աղտոտված են նաև օդային ու ջրային ավազանները: Կան ջրավազաններ , որոնց ջրային բուսական ու կենդանական աշխարհները խիստ աղքատացել են գետը թափվող արդյունաբերական ջրերից:

Տրանսպորտ

Բաթումի-Երևան գնացք

Գնալով ավելանում է տրանսպորտի վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա. երկաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհներին ամբողջովին ոչնչացվել են բնական կենսահամակարգերը: Ճանապարհային շինարարությունն այսօր սպառնում է նաև հատուկ պահպանվող տարածքներին : Մյուս կողմից՝ ճանապարհներին մերձակա սանիտարական գոտում կենսաբազմազանությունն աճում է, կատարվում են ծառատնկումներ ու կանաչապատումներ:

Անհամեմատ աճել են ավտոմեքենաների գազային արտանետումները՝ ազոտի օքսիդները , ածխածնի մոնօքսիդը, ցնդող օրգանական միացությունները , մուրը , ծծմբի երկօքսիդը և այլն:

Զբոսաշրջություն

Բնաշխարհին զգալի վնաս են հասցնում նաև անկազմակերպ զբոսաշրջությունը, բուսական պաշարների (դեղաբույսեր, սնկեր և այլն) չկարգավորված հավաքն ու օգտագործումը, որոնց հետևանքով զանգվածաբար ոչնչանում են բուսական ու կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ, շրջակա միջավայրն աղտոտվում է կենցաղային աղբով և այլն:

Այս խնդիրների լուծման ամենաարդյունավետ եղանակներից մեկը բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության բարելավումն է, մարդկանց մեջ բնական միջավայրի հանդեպ հոգածու վերաբերմունքի մշակումը:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Բնությունը մեզ շրջապատող նյութական աշխարհն է օդը, ջուրը, հողը, լայնածավալ դաշտերը, լեռներն ու օվկիանոսները, բույսերն ու կենդանիները: Երկար ժամանակ մարդը սովորել է օգտվել բնության բարիքներից, այն ծառայեցրել իր շահերին: Բայց երբեմն էլ հակադրվել է բնությանը կտրատել անտառներ, ցամաքեցրել գետերը, ոչնչացրել վայրի կենդանիներին ու բույսերին, շռայլել ու սպառել օգտակար հանածոները, կեղտոտել օդը, ջուրը և այլն: Մարդը բնության պատմական զարգացման արդյունք է, որը հարյուր հազարավոր տարիներ առաջ աշխատանքի շնորհիվ դուրս է եկել կենդանիների թագավորությունից, դարավոր աշխատանքի պրոցեսում ոտք դրել հասարակակության զարգացման օրինաչափությունների նոր ոլորտ, իրեն ենթարկել և իր շահերին ծառայեցրել բազմաթիվ բնական ուժեր, սակայն բնության շրջանակներից նա դուրս չի եկել և հավերժ անզոր կլինի բնության սահմաններից դուրս գալուն: Բնության պահպանության գործը լավ հիմքի վրա դնելու համար մարդը լավ պետք է ճանաչի բնությունը, նրա օրինաչափությունները: Նա պետք է պատկերացում ունենա բնության յուրաքանչյուր առարկայի ու երևույթի էության, պատճառի ու նշանակության, փոխադարձ կապերի, դրանց փոփոխության հետևանքների մասին: Բնության և հասարակության բարդ փոխհարաբերությունների ներկա էտապում բնության պահպանության, բնական հարստությունների օգտագործման հարցը մղվում է առաջնահերթ պլան և դառնում ազգային և միջպետական հարաբերությունների գլխավոր խնդիր, որի հաջող լուծումը պահանջում է ոչ միայն տվյալ բնագավառի բարձր մակարդակի մասնագետների պատրաստում, այլև ազգաբնակչության բոլոր շերտերի էկոլոգիական և բնապահպանական գիտելիքների կտրուկ բարձրացում: Բնապահպանությունը համալիր գիտություն է բնական էկոհամակարգերի բարելավման, բնության հասրակության հավասարակշռության պահպանման մասին: Քանի որ բնապահպանական խնդիրների լուծումը համաերկրային բնույթ է կրում, ուստի դժվար է գտնել գիտություն և ընդհանրապես մարդկային գործունեության մի բնագավառ, որտեղ հնարավոր լինի անտեսել բնապահպանական մոտեցումները: 5 Բնապահպանության հարցերով այսօր զբաղվում են բոլոր բնական և հասարակական

գիտությունները: Բնության գեղեցկությունը նպաստում է ստեղծագործական տրամադրության ձևավորմանը, մարդու մոտ առաջացնում է դրական հույզեր, դաստիարակում ճաշակ ու զգացմունքներ: Բնության հետ շփվելը պետք է լինի խելամիտ և խորապես մշակված: Բնության հետ շփվելու կուլտուրան մարդու ընդհանուր կուլտուրայի բաղկացուցիչ մասն է: Մարդը բնության մի մասնիկն է, նրա գործունեությունը բնության մեջ փոփոխություն է առաջացնում, որը բումերանգի նման վերադառնում է լավ թե վատ առումներով: Ժամանակակից բնապահպանական խնդիրները այնքան էլ հասարակ չեն: Կայուն շրջակա միջավայրի պահպանումը, անվտանգ կյանքի գոյությունը Երկրի վրա, կարևոր խնդիր է մարդկության համար:

Քանի որ մենք ապրում ենք ոչ միայն կենսոլորտի ռեսուրսների այլև մեր և ապագա սերունդների առողջության պահուստի հաշվին, ուստի անհրաժեշտ է առաջին հերթին ի շահ էկոլոգիական դաստիարակության ու կրթության հստակորեն սահմանել բնության և մարդու աշխատանքային ու սոցիալական գործունեության փոխհարաբերությունների, դրանց պատճառահետևանքային կապերի գնահատման ու կանխատեսման մեթոդները: Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը մանկավարժական գործընթաց է, որի նպատակն է մարդուն զինել բնական միջավայրի և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտ գիտելիքներով: Էկոլոգիայի ուսումնակրթական ծրագրում ընդգրկվում են այնպիսի հարցեր, ինչպես օրինակ հասարակության ու բնության միասնականության ըմբռնումը, շրջակա միջավայրի բնօգտագործման ու բնության պահպանության խնդիրները:

Առանց մարդու գիտակցությունը փոխելու, հնարավոր չէ պահպանել բնությունը, դրա համար շատ կարևոր է դպրոցներում ձևավորել բնապահպանական ճանաչողություն, վերաբերմունք: Բնապահպանական խնդիրները այսօր չէ որ առաջացել են, բայց մեր օրերում իրավիճակը կտրուկ վատացել է: Մարդը ուշադրություն դարձնելով բնությանը, փորձում է ինքն իրեն պաշտպանել:

Շրջակա միջավայրի աղտոտումը գլոբալ բնապահպանական խնդիր է: Աղտոտման եղանակները տարբեր են և շատ: Բնապահպանական ծանր վիճակը կարելի շտկել, բայց այն գիտելիք է պահանջում և միջոցներ: ԲՆապահպանական խնդրի այս լուծումը մարդկությանը կօգնի բնապահպանական մտածողություն առաջացնել, պատասխանատվություն կրել մարդու և բնության փոխհարաբերություններում: Բնապահպանական խնդիրները դաստիարակում են հատուկ վերաբերմունք քո բնակավայրի, դպրոցի, շրջապատի նկատմամբ: Բոլոր այն արժեհամակարգը՝ գիտելիք, ունակություն, կարողունակություն, վերաբերմունք, համոզմունք, որը

ձևավորվում է խնդրի լուծման ժամանակ, նպաստում է սովորողների կողմնորոշմանը բնապահպանական մշակույթին վերաբերմունք դեպի բնությունը։ Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքը օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում ուսուցումը հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, նինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը։ Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի և հետաքրքիր լինի երեխաների համար, այլև ունենա ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթան հանդիսանա աշակերտների ստեղծագործական միտքը զարգացնելու գործում։

Բնապահպանական առաջին մակարդակում պետք է հիմնավորել գլխավոր պատկերացումները շրջակա բնության մասին։ Այստեղ խնդիր է դրվում երեխաներին սովորեցնել սիրել բնությունը, խնամքով վարվել նրա հետ։ Մարդ տեսակի վերապրելը, շրջակա միջավայրի պահպանութունը կարող են վերացական հասկացություններ դառնալ, եթե մենք երեխային չներշնչենք պարզ և համոզիչ միտք այն մասին, որ մարդը բնության մի մասն է, և առանց բնության համալիրների պահպանության, մարդու հետագա զարգացումը Երկրի վրա վտանգվում է

Դաստիարակել բնապահպանության և բնական հարստություններ արդյունավետ օգտագործման գործնական կարողություններ, շրջակա միջավայրի վիճակի գնահատնան ունակություններ, նրա հետագա բարելավման ճիշտ լուծումներ։ Բնության մեջ պահպանել վարքի գիտակցական նորմերը, բացառել բնական միջավայրի աղտոտելը։ Սովորողների մոտ զարգացնել բնության հետ շփվելու, նրա բարերար ներգործությունը զգալու, շրջակա բնությունը ճանաչելու կարողությունները։ Կայուն զարգացման և շրջակա միջավայրի պահպանության հարցերում բոլոր տարիքի մարդկանց համար ապահովել հուսալի տեղեկատվություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդը ծնվում է բնության արքան, տերն ու տիրակալը լինելու համար, բայց իմաստությունը, որով նա պետք է կարողանա կառավարել, իրեն ի ծնե չի տրվում, այլ ձեռք է բերվում դաստիարակության և ուսման շնորհիվ»:

Ն. Լոբաչևսկու

Հասարակությանը տեղյակ պահել շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, այս ամենին կարելի է հասնել դպրոցական տարիներից սկսած, ճիշտ և տեղին ներկայացնել Երկիր մոլորակին սպառնացող յուրաքանչյուր վտանգի, խնդրի մասին: Այսպիսով՝ պարզ է, որ ձևավորելով էկոլոգիական գիտակցությունը կրթության միջոցով, հնարավոր է լուծել մարդկության առջև ծառացած և նրան հուզող և մտահոգող շատ խնդիրներ: Իր գիտելիքները հարստացնելով, բնության ու հասարակության փոխազդեցությունը, անցյալ և ներկա վիճակը վերլուծելու և գնահատելու կարողություն ձեռք բերելով՝ մարդը կձերբազատվի սխալ պատկերացումներից, անհիմն մտայնություններից, հնարավորություն կունենա նորովի, ոչ թե սովորույթի ուժով, այլ՝ գիտակցաբար ընկալելու իր շուրջը տեղի ունեցող երևույթները:

Այո՝ մարդը պիտի սովորի՝ սովորի կառավարել և իրեն, և մոլորակի գործերը, կառավարի այնպես, որ չխաթարվեն հողագնդի վրա մարդկային կյանքի պայմանները, պահպանվի գոնե առկա վիճակը գալիք սերունդների համար, չէ որ Երկիր մոլորակը մարդկության բնակության կացարանն է, Հայաստանը՝ մեր փոքրիկ բնակարանը: Մարդը պիտի սովորի կառավարել և՛ իրեն, և՛ մոլորակի գործերը, կառավարի այնպես,որ չխաթարվեն հողագնդի վրա մարդկային կյանքի պայմանները, պահպանվի գոնե առկա վիճակը (հետագա ավելի նվազ կորուստներով)՝ նաև գալիք սերունդների համար: Դրա համար անհրաժեշտ է.

- ✓ բնապահպանական կրթության համալիրություն՝ միջառարկայական կապերի հաշվառումով:
- ✓ գիտելիքների գործնական կիրառում ամենօրյա կյանքում,բնապահպանական վարքի համապատասխան ունակությունների ձևավորում
- ✓ էկոլոգիական գիտելիքների սոցիալականություն, որն առնչվում է անհատական վարքի ոլորտին և ձևավորում է ներկա սերնդի պատասխանատվություն ապագայի հանդեպ

6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ. Ս. Մելքումյան, Մ. Հ. Գալստյան, «Բնապահպանության հիմունքներ», 2010թ.

2. Մարուխյան Ռ., Հովսեփյան Ա., «Անձի էկոլոգիական կուլտուրան»

3. Մարինե Օհանջանյան, «Պլաստիկի տեսակները, տարբերանշանները», 17 Մարտ 2020թ.

4. Ժաննա Բեքիրյան, «Մենք ապրում ենք պլաստիկի դարաշրջանում»,

5. Գասպարյան Ա. Վալեսյան Լ. Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ

6. Մարուխյան Ռ. Շրջակա միջավայրի պահպանություն- Երևան 2002